Մոսկով առաւ ՀԻԼԺ Հոթին ի ձեռաց, և աւերեց զՊուղտանու երկիրն և ոչ ի նոցանէ էր, այլ վասն ծովացեալ մեղացն մերոց։

1740.

Պօղոսի Բիրոմալ մականուամբ քահանայէ շարադրեալ է Բառգիրքս այս, ի կարգէն Սրբոյն Տօմինիկոսի, որ ի Դախիջեւանու վանս բնակէր ի վաղընջուց ժամանակաց. ճշմարիտ, ով ընթերցող, զի սղալանք գտանին բազումք ի մէջ գրիս, բայց ճշմարիտ է եւս որ բազմապէս օգնութիւն գտցեն և առցեն ի սմանէ ընթերցողք նորավարժք մանկունք, եթէ ունին զսէր ուսանելոյ։ Գիտելի է եւս, եթէ զկամեսցի զկատարելագոյն բառգիրք հայկական լեզուով ունիլ, նմա պարտ է որոնել զՍտեփաննոս վարդապետին շարադրեալ, որ յորջորջի Գանձարան լեզուին Հայոց, շարադրեալ մեծաւ աշխատութեամբ, այսինքն երեսուն և երրորդ ամս, մինչեւ աւարտեալ է զնա. երկու անգամ սրբագրեալ է, և յերրորդ սրբագրութեան հանգեաւ ի Տէր, (1740) ի Ստանիսլաւ քաղաքն Լեհաց։